ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՍԱԼԵՌՈՒՄ

ՄՈՒՍԱԼԵՌ...

Արդեն ավանդական դարձած՝ յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսվա վերջին կիրակին Մուսալեռան փառապանծ հերոսամարտին նվիրված երկնասլաց հուշարձան -կոթողի մոտ հավաքվել էին հերոսամարտի մասնակիցներից արդեն մատների վրա հաշվվող մուսալեռցիները, մյուսների զավակները, թոռները, ծոռները՝ դարձյալ և դարձյալ իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմահ հերոսամարտին, որը հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ մղված բազմաթիվ հերոսամարտերից առանձնանում է նրանով, որ համաշխարհային հնչեղություն է ստացել... Մուսալեռան հերոսամարտի մասին գրվել են վեպեր, բանաստեղծություններ, պատմական ուսումնասիրություններ, պատմվածքներ, հուշագրություններ, հորինվել են օպերաներ, սիմֆոնիաներ, օրատորիաներ, երգեր, նկարահանվել են կինոժապավեններ... Միայն ավստրիացի մեծ գրող և մարդասեր Ֆրանց Վերֆելի «Մուսալեռան քառասուն օրը» վեպ-հերոսապատումը թարգմանվել է քաղաքակիրթ աշխարհի մոտ 40 լեզուներով և տպագրվել միլիոնավոր տպաքանակով... Եվ դեռ կգրվեն նորից ու նորից... Դա հայ ժողովրդի հերոսական ոգու պոռթկումն է հանուն արդարության, ազատ կյանքի և հավերժ գոյատևման:

... Եռուզեռ է հուշարձանի շրջակայքում՝ հարիսատանը, դասավորվում են պղինձները, լվացվում, մաքրվում, լցվում ցորենով ու մսով և շարվում կրակարանների վրա... 120 մեծածավալ պղինձ... Զիլ զնգում է զուռնան, խրոխտ թրընդում է թմբուկը, և ժողովուրդը մարտական պարեր է սկսում: Հայաստանի տարբեր շրջաններից եկած մուսալեռցիները անտառակում վրան են խփել, ճոճեր կապել երեխաների համար, նրանք, ըստ հին-հին սովորության, գիշերելու են այստեղ: Ուղիղ կեսգիշերին զուռնայի և թմբուկի նըվագի տակ, որը ղեկավարում է երիտասարդ մուսալեռցի Սարգիս Ջեյրույանը, միանգամից բոցավառվում է կաթսաների տակի վառելափայտը, և սկսում է հարիսայի եփը, որը փորձված և աչալուրջ տղաների հսկողության տակ շարունակվելու է մինչև առավոտ... Իսկ հաջորդ առավոտ մարդիկ գալիս են ու գալիս դեպի հուշարձան, գալիս են տատիկներ և պապիկներ, երիտասարդուհիներ և երիտասարդներ, մանուկներ, մանուկներ... Մի պահ թվում է, թե վերջ չկա այս մարդկային անվերջանալի հոսքին, գալիս են ոտքով, ինչպես որ կարգն է ուխտատեղի գնացողների: Ամեն կողմ երգ է ու նվագ, պար է և ուրախություն, հպարտության և անսասան կամքի դրսևորում:

Սկսվում է տոնախմբության հանդիսավոր մասը: Բացման հակիրճ և բովանդակալից խոսք է ասում Մուսալեռան հայրենակցական միության նախագահի տեղակալ Մ. Մինասյանը, որի առաջարկությամբ բոլորը մեկ րոպե լռությամբ հարգում են 1915 թվականի մեծ եղեռնի անմեղ զոհերի, Մուսալեռան հերոսամարտի նահատակների, 1988 թ. Սումգայիթի ցեղասպանության զոհերի, մինչև այժմ վախճանված մուսալեռցիների և ահավոր երկրաշարժի զոհերի հիշատակը:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Հր. Սիմոնյանը իրեն հատուկ խոր, հանգամանալից զեկուցումով անդրադառնում է հայ ժողովրդի անցյալին, ներկային, ապագային, Մուսալեռան հերոսամարտի և նրա այժմեական նշանակության հարցերին և բոլորին կոչ է անում համախմբվել և գոտեպնդվել Մուսալեռան ոգով: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Խուրշուդյանը հուզիչ խոսքերով դիմում է հայ ժողովրդին՝ արիանալու, յուրաքանչյուր նենգության ազգովին բռունցք դարձած դիմագրավելու կոչով: Սփյուռքահայության կողմից ջերմ և սրտաբուխ խոսքեր է ասում հատուկ այս տոնախմբությանը ներկա գտնվելու համար հայրենիք եկած կիպրահայ լրագրող Գևորգ Տեր-Բուրքուղը: ՀԿԿ Էջմիածնի շրջկոմի առաջին քարտուղար Ն. Եղիազարյանը նույն ոգով է դիմում ժողովրդին, հատկապես շեշտելով, որ այս տարի Մուսալեռ ավանի № 1 միջնակարգ դպրոցը կկոչվի Ֆրանց Վերֆելի անունով և մինչև 1990 թվականը՝ Մուսալեռան հերոսամարտի հոբելյանական՝ 75-ամյակը, Էջմիածնի շրջանի ղեկավարությունը կբարեկարգի հուշարձանի տարածքը: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի օրհնությունն ու բարեմաղթանքներն է հղում ներկաներին Ադրբեջանի թեմի առաջնորդ (այժմ արդեն՝ նախկին), գերաշնորհ Անանիա եպիսկոպոս Արապաճյանը: Կարդացվեցին հուզիչ և սրտամոտ բանաստեղծություններ: Բոլորի աչքերից արցունք է քամում մուսալեռցի տասնամյա մի աղջնակի՝ մեր մեծ բանաստեղծների ստեղծագործություններից կազմված կոմպոզիցիայի հոյակապ արտասանությունը: Յուրաքանչյուր ելույթից հետո իրենց երգերով և պարերով հանդեսին շուք են տալիս Էջմիածնի Կոմիտասի անվան մշակութային տան «Մուսալեռ» ազգագրական համույթի աղջիկներն ու տղաները՝ Ա. Բալաբանյանի ղեկավարությամբ:

Հանդիսավոր մասը եզրափակում է Մուսալեռան հայրենակցական միության նախագահ, վաստակավոր ուսուցիչ Ա. Արամայիսյանը, որը հրապարակում է Բեյրութի, Հալեպի, Լոս Անջելեսի, Սան Ֆրանցիսկոյի հայրենակցական միություններից, Փարիզից՝ Լ. Տեր-Պետրոսյանից, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Կ. Սիմոնյանից ստացված շնորհավորական հեռագրերը:

Հանդեսը հմտորեն վարեց Մուսալեռան հայրենակցական միության քարտուղար Պ. Ղազարյանը:

... Հանդեսից հետո թափորը փողփողացող դրոշների, թմբուկ-զուռնայի նվագի տակ շարժվում է դեպի հարիսատուն, որտեղ գերաշնորհ Անանիա եպիսկոպոսը երկու վարդապետի և սարկավագի հետ միասին օրհնում է խնկաբույր հարիսան: Ապա սկսվում է հարիսայի բաշխումը ժողովրդին:

Տոնախմբությանը ներկա էին նաև արտասահմանից մեր ժողովրդին օգնության եկած տարբեր երկրների ներկայացուցիչները, բզկտված Լիբանանից՝ տիկին Արսինե Դարյանը և պարոն Համամջյանը, բազմաթիվ զբոսաշրջիկներ արտասահմանից և Խորհրդային Միությունից, ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ալեքսանյանը, «Երեկոյան Երևան» թերթի խմբագիր Կ. Վարդանյանը, Հայոց համազգային շարժման ներկայացուցիչներ Բ. Արաքցյանը և Վ. Սիրադեղյանը, հայկական ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

Տոնախմբության կազմակերպված և օրինակելի անցկացման գործում մեծ ներդրում ունեն մուսալեռցիները՝ Գ. Վրթանեսյանը, Ա. Լուռջյանը, Փ. Բաղդասարյանը, Պ. Ղարիբյանը և ուրիշներ:

Մուսալեռան հերոսամարտի 1989 թվականի տոնախմբությունը մի անգամ ևս ամրապնդեց մեր ժողովրդի միասնությունը, առույգացրեց նրա հերոսական ոգին, պայքարի նոր ավյուն ներարկեց, որն այս օրերին այնքան անհրաժեշտ է հայ ժողովրդին:

ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՐՏԻՐՅԱՆ
(Հեղինակը խնդրել է հոնորարը փոխանցել «Ամարաս» բարեգործական ընկերության հաշվին)



ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— Պահեր տոնախմբությունից: